ԿԱՐՃԻՔ

Արծրունի Էդվարդի Վարդանյանի «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը

Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների գործարար ակտիվության բարձրացման, տարածաշրջանային ներդրումային գրավչության ապահովման հիմքում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման հիմնախնդիրների բացահայտումն է և լուծման ուղիների առաջքաշումը, ինչը պետք է կատարվի հաշվի առնելով տվյալ երկրի ձեռնարկատիրական գործունեության համակարգի պահանջմունքները և սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը: Թեմայի արդիականությունը պահանջում է հետազոտական աշխատանքի արդյունքներով մշակել ուսումնասիրվող համակարգերի զարգացման հիմնախնդիրների լուծման տեսական դրույթներ և կատարելագործման մեթոդական հիմք, որում էլ դրսևորվում է ատենախոսության հիմնական գիտական նորույթը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ: Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության վերաբերյալ կատարված հետազոտությունը կոչված էր ապացուցելու, որ գործող համակարգերը չունեն արդյունավետության գնահատման ենթահամակարգ, ինչն էլ կառուցակարգվել և ներկայացվել է աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում: Ենթակառուցվածքների արդյունավետությունը ստուգելու նպատակով կիրառվել է Արդյունավետության հիմնական ցուցանիշը (այսուհետ՝ KPI /Key Performance Indicator/):

Թեմայի արդիականությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման գործընթացը տասնամյակներ շարունակ մնում է վիճահարույց: Չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունեն մեծ քանակությամբ գիտագործնական հետազոտություններ, այնուամենայնիվ, բացակայում է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատման գործիքակազմը: Վերոնշյալ հանգամանքները պայմանավորել են ընտրված օբյեկտի հետազոտման համար առանձնահատուկ մոտեցումների ընտրությունը և գործիքակազմի մշակումը: Արդյունքում միջազգային չափումների համատեքստում մշակվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), որի միջոցով գնահատել ենք Հայաստանի դիրքը՝ որպես ելակետային տվյալներ ընդունելով GEI (Global Entrepreneurship Index/Գլոբալ ձեռնարկատիրության ինդեքս) ինդեքսում ներառված ենթակառուցվածքային տարրերը:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և թվով 16 հավելվածներից: Այն շարադրված է 119 համակարգչային էջերի վրա՝ ներառյալ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը, պարունակում է 20 աղյուսակ, 19 գծապատկեր:

Ներածությունում հիմնավորված են թեմայի ընտրության և նրանում քննարկվող հարցերի արդիականությունը, ստացված արդյունքների գործնական կիրառման հրատապությունն ու շրջանակները:

Ատենախոսության առաջին՝ «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը, դրա գնահատման և վերլուծության տեսամեթոդաբանական մոտեցումները» վերտառությամբ գլխում բացահայտված է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը և ներկայացված են դրա հիմնական բաղադրիչները, ուսումնասիրված են ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման տեսական և մեթոդաբանական մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության արդի վիճակի վերլուծությունը և արդյունավետության գնահատումը» վերտառությամբ գլխում իրականացվել են ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի արդի վիճակի վերլուծությունները, դրանց արդյունավետության գնահատումներն՝ ըստ հեղինակի կողմից առաջարկված դասակարգման: Մասնավորապես, վերլուծություններն ու գնահատումներն իրականացվել են ըստ արտադրական (արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և տրանսպորտի) և ոչ արտադրական ենթակառուցվածքների (SS, գբոսաշրջության և բանկային):

Կատարվել են ամբողջ արդյունաբերության վրա հանքագործական արդյունաբերության ենթաճյուղի ազդեցության, շինարարության ընդհանուր ծավալի վրա հիմնական միջոցների գործարկման ազդեցության, պատենտավորման հայտերից բարձր տեխնոլոգիաների արտահանման կախվածության, բանկերի ակտիվների և վարկերի միջև փոխադարձ կապվածության և այլ վերլուծություններ: Այնուհետև իրականացվել է արդյունավետության գնահատում և վերլուծություն՝ ըստ Արդյունավետության հիմնական ցուցանիշ KPI ինդեքսի:

Ատենախոսության երրորդ՝ «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարելավման գերակայությունները» վերտառությամբ գլխում կատարված է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատում նոր մշակված AIP ինդեքսով և գնահատված է ՀՀ-ի դիրքը միջազգային ասպարեզում ըստ տվյալ ինդեքսի, ինչի հիմքով էլ առաջ են քաշվել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտ ուղիներ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Աշխատանքի գիտական նորույթներից կարելի է նշել հետևյալները:

1. Միջազգային փորձին համահունչ մշակվել և տեղայնացվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի և

արդյունավետության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), ինչը հնարավորություն կտա գնահատել ինչպես ընդհանուր, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության մակարդակը և արդյունավետությունը:

2. Մշակվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման միջոցառումների համալիր, որն ուղղված է ֆինանսական ռեսուրսների հասանելիության, օրենսդրական կարգավորման, հարկային, մաքսային և դատաիրավական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

1. Աշխատանքում ուսումնասիրվել են արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի, ՏՏ, զբոսաշրջության և բանկային ոլորտները: Աշխատանքը կշահեր, եթե ոլորտային ընտրությունը հիմնավորվեր, ինչպես նաև իրականացվեր առավել մանրամասն վերլուծություն:

2. 2.2. պարագրաֆում կատարվել է կանխատեսում զբոսաշրջության ընդհանուր ազդեցության վերաբերյալ: Ըստ էության ներառված չէ COVID-19 համաճարակի ու 44-օրյա պատերազմի հետևանքով վնասները ՀՀ տնտեսության, այդ թվում՝ զբոսաշրջության ակտիվության վրա:

3. Աշխատանքի 2.2 պարագրաֆում ներկայացվել են հարցման արդյունքները, սակայն հարցվողների տոկոսային ցուցանիշների հանրագումարը կազմում է 110% (40% ներմուծող ընկերություններ, 30% առևտրային ընկերություններ, 20% արտահանողներ և 20% արտադրողներ): Նշված հանգամանքը պարզաբանման կարիք ունի:

4. AIP ինդեքսում հեղինակի կողմից ներկայացվել է գնահատականների միջակայքեր, որոնցով առանձնացվել են ոչ բարենպաստ, միջին և բարենպաստ դիրքեր: Ցանկալի է ներկայացվեր ընտրված միջակայքերի սահմանումն ու այն հիմնավորել:

5. 3.2 ենթագլխում առաջարկվում է բանկերում և վարկային կազմակերպություններում ներդնել «Բազել IV» մոնիթորինգի համակարգը, որը ենթադրում է բանկերի կապիտալի չափի ավելի խիստ պահանջներ, ռիսկերի կառավարման նկատմամբ վերահսկողության գործընթացի ուժեղացում, տեղեկատվության բացահայտման պահանջների ավելացում: Արդյոք ՀՀ բանկային համարարգը պատրաստ է մոտակա ժամանակ անցնել այդ համակարգին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արդյունքները: Աշխատանքում կատարվել է ենթակառուցվածքային ապահովվածության վերաբերյալ խորը հետազոտություն, ներկայացվել է հեղինակային մոտեցում և իրականացվել է գիտագործնական վերլուծություն:

Ատենախոսության վերաբերյալ հրատարակված են թվով 11 գիտական հոդվածներ: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության հիմնական դրույթներին:

Արծրունի Էդվարդի Վարդանյանի «Ձեռնարկատիրական գործունեության

ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը, որը ներկայացված է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, բավարարում է Հայաստանի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի՝ 6-րդ և 7-րդ կետերին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության թեկնածու,
«Տնտեսագիտական գիտությունների»
ամբիոնի դոցենտ ***Է. Բ. ՊԵՊԼՈՉՅԱՆ***

Է. Բ. Պեպլոզյանի ստորագրությունը հաստատում եմ,

Գ. Վ. Պլեխանովի անվան ռուսական
տնտեսագիտական համալսարանի անձնակազմի
գծով մասնագետ ***Ա.Ն. Զախարյան***

01 սեպտեմբերի 2021թ.